

Ա. Ե.—«Մշակ» ՄԱՍԻՆ

Ոմն պ. Ա. Եզն.-ն «Ճարագի» վերջին համարներում «Մշակ» լրագրի ուղղութիւնը ենթարկում է բաւական լուրջ քննութեան և եզրակացութիւնը, ի հարկէ, չի կարող միշտարական լինել այն մի բուռն մոլուանդների համար, որոնք դեռ շարունակում են կարծել, թէ «Մշակ» ուղղութիւն ունի:

«Խնդիրը նրանումն է որ մեր «Մշակական» տափակութիւնը պէտք է աշխատէր, ճգնէր պարզել այն, թէ ինքը իրեն արտայայտիչ որոշ հասարակական ուղղութեան, արդեօք կանգնած է այդ բարձրութեան վրայ, արդեօք նա կարողանում է ղեկավարել հասարակական միտքը, արդեօք նա ներկայացնում է աւանդարտը հասարակական անտեսական հոսանքի և արդեօք այն միջոցները և ձևերը, որով ղեկավարում է «Մշակը», ունին որոշ գործնական նաևնակութիւն և բաւարութիւն տալիս են կեանքի պահանջներին. Առա խնդիրներ, որոնց լուծումը, նախ քան աշխատելը հասարակական միտքը ղեկավարելու, ամեն մի պարբերական թերթ պէտք է աշխատի առաջուց պարզել իրեն: Խև յիշում եմ երր Խուս մամուլը շատ արդարացի կերպով սկսեց այս հարցը դնել հայ հասարակական կեանքում, «Մշակը» զարկուրած այն մոքից որ իրեն անւանում են յետադիմական, սկսեց հայոյանքներ տեղալ, սակայն հարցը մնաց բաց:

Ըստ երևոյթին, պ. Երգ.-ն դեռ թարմ երիտասարդ է և տակաւին լիովին համոզուած չէ, որ «Մշակ» եթէ մի որոշ ծրագիր ունէ, այդ հէնց հայոյելն է և լէօների ամբողջ բարոյական և մտաւոր ընդունակութիւնը հէնց յիշոցներ շարադրելումն է: Բայց պ. Երդն ուզում է մի որև է նիւթ գտնել գտարկապրատ թերթում և գտնում է.

«Կերցըք «Մշակը» և կգտնեք ամեն տեսակ սգով գրուած յօդուածներ և կերպական և լիքերալ և բիւրօկրատիական ու սոցիալական մի կատարեալ քառու: Սա որոշ ուղղութիւն չունեցող մամուկի ընորոշ յատկանիշն է: Մամուլը, թերթը պէտք է ունենայ մի որոշ ուղղութիւն, նրա համար պէտք է պարզ լինին խնդիրները, նա պէտք է համոզուած լինի, որ խնդիրների լուծման այս ինչ ձևը միակ անհրաժեշտն է և պէտք է աշխատի մտցնել կեանքում, պէտք է աշխատի կեանքը տանել այդ ուղղութեամբ, հետեապէս ինչ որ դրա դէմ է, նա վնասակար է և յետադէմ և պէտք է աշխատել հեռացնել, սակայն որովհետեւ մեր բուրժուական մամուլը չունի որոշ ծրագրուած սկըզբունքներ, որոշ ուղղութիւն, ուստի լցնում է իր էջերը ամեն ինչով:

Բացի սորտանից կը գտնէք բազմաթիւ հարցեր գրուած «Մշակում» այս ձեռվ. և նյա ինչ ինդիքը այսպէս է, այն ինչը այնպէս: Մարկոսը այսպէս է ասում, Կիրակոսը այնպէս. ինչպէս ուզում էք հասկացէք. հարցերի լուրջ ուսումնասիրութիւն, որոշ աշխարհայեացք այդտեղ ինդիքի մասին նա չի ներկայացնուած. օր. կարծեմ Մշակի 15 համարում գրուած էր առաջնորդող յօդուած «Համայնքի» մասին և ինչ էր եզրակացութիւնը:

Հայը դրուած է հրապարակի վրայ, եւ մանրամասն դեռ չի ուսումնասիրուած, իսկ անհրաժեշտ է, որ նա լուրջ կերպով ուսումնասիրուիր:

Ահա քեզ մարդարիտներ. թերթը տալիս է ինդիքներ, հարցեր, բայց ինքը չունի այդ մասին կարծիք, որոշ աշխարհայեացք: Ամեն թերթի համար պէտք է վճռուած լինեն այն ինդիքները, որոնց ուզում է տալ հասարակութեան և որպէս զի կարողանայ առաջնորդել հասարակական կեանքը, հասարակութիւնը չը պէտք է տայ դրա պատասխանը, դա զեկավարող պարբերական մամուլի պարտականութիւնն է:

Բայց պ. Երգ-ն շարունակում է խրատել «Մշակին» և յոյս ունի որ իւր խօսքերը որ և է ազդեցութիւն կունենան:

«Կեանքը սահում է, հասարակական երևոյթները ամեն քայլափոխում ստեղծում են նոր պայմաններ, նոր կենսական հարցեր, նոր հրատապ ինդիքներ. սակայն մեր բուրժուական դիրերավիզմը կամ մշակական ճահիճը քորչ է գալիս հասարակական երևոյթների պաշին: Ինչն է պատճառը զիսաւորապէս այս դրութեան, չէ՞ որ «Մշակը» ամէն բոլով ամեն քայլափոխում ըստ երևոյթին ցանկանում է կամ աւելի շուտ վկարծում է, որ նա ներկայացնուցիլ է ազատամիտ հոսանքի:

«Սակայն սա մի թիւրիմացութիւն է, որպիետեւ ներկայ «Մշակը» տալրում է նախկին «Մշակի» փառքի բեկորներով: Անա ուզում է սնուցանել մեր հասարակութիւնն Արծրունու հայկական կեանքը մտցրած, ևայ հասարակութեան մէջ պատրաստած նոր խնդիքների փշրանքներով որոնք ներկայումս «անկարող են բաւարարութիւն տալ, անկարող են զեկավարել հասարակական միտքը»:

Նախկին «Մշակի» փառքը թաղուել է Արծրունու հետ և ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, որովհետև հէնց այդ նախկին «Մշակի» գաղափարներն էլ մի առանձին խտութիւն չունին և շատանգամ երեխայական էին: Եւ իզուր է պ. Երգ-ն վրդովւում գոչելով:

«Սակայն մեր մշակական բուրժուաները դեռ ևս ապ- պրում են անցեալով, դեռ ևս մնում են անշարժութեան մէջ,

«ատեղծել են մի լճացած կեանք և անցեալի մէջ են դրում «հասարակական միտքը ղեկավարող սկզբունքնեղը. Մեր հա-
սարակական կեանքը՝ ուզում են քառ տալ դէպի յետ, դէպի
«անցեալը: Ժամանակ է «մշակականներին» յիշել Արծրունու
«փօսքերը: «Նորա պատիւ են պահանջում իրանց համար,
«որովհետեւ նորա անցեալ են, իսկ մենք պատիւ ենք
«պահանջում մեզ համար, որովհետեւ մենք ապագայ ենք»:
Ուր Մշակը անցեալ է, ապրում է անցեալով՝ դորա պարզ
«ապացոյցն է նորա ամբողջ գործունէութիւնը, նրա արծարծած
«մոքերի յետադիմական ձեր—մաքեր որոնք անշնորհք կլինու-
«թիւներ են Նրծրունու հայեացքներին: Յետագայում մենք
«կը խօսենք Մշակի դրած հետևեալ հարցերի մասին. կաշ-
«վատենք ցոյց տալ թէ որքան ըէսկցիօն կերպով է վճռում
«այդ խնդիրները».
